# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## 2025

ՀՈՒՆԻՍ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

## ԹԵՍՏ 2

| | |
|---|---|
| Խմբի համարը | |
| Նստարանի համարը | |

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

**(1-4) Կատարել առաջադրանքները.**

**1** Գտնել 14-ի $\frac{3}{7}$ մասը:

1) 6
2) 5
3) 10
4) 9

**2** Գտնել 14-ի բոլոր բաժանարարների գումարը:

1) 28
2) 24
3) 16
4) 15

**3** Գտնել 12-ի և 14-ի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

1) 168
2) 78
3) 84
4) 90

**4** Գտնել 7 հայտարարով բոլոր կանոնավոր կոտորակների գումարը:

1) 2
2) 3
3) 2,2
4) 3,2

(5-8) Գտնել արտահայտության արժեքը.

**5** $\frac{5}{2}\left(\frac{12}{5}-2\right)$:

1) 0
2) –15
3) –3
4) 1

**6** $\frac{x+6y}{x+y}$, եթե $\frac{y}{x}=4$:

1) 5
2) 3
3) $\frac{15}{2}$
4) 1

**7** $\left(\sqrt{3}-1\right)^2+\left(\sqrt{3}+1\right)^2$:

1) 6
2) 12
3) 0
4) 8

**8** $18\sin\alpha$, եթե $\cos\alpha=\frac{\sqrt{5}}{3}$ և $\frac{3\pi}{2}<\alpha<2\pi$:

1) –10
2) 10
3) –12
4) 12

**(9-12) Լուծել հավասարումը.**

**9** $\frac{3x-5}{7x-20}=\frac{1}{4}$:

1) 3
2) 0
3) –1
4) 5

**10** $\sqrt{x^2+6x}=x+2$:

1) $\varnothing$
2) –2
3) 0
4) 2

**11** $3^x+3^{x+1}=4$:

1) 0
2) 0 և 1
3) 1
4) 0,25

**12** $\sin\left(4x+\frac{\pi}{6}\right)=0$:

1) $\frac{\pi}{24}+\frac{\pi k}{4},\ k\in Z$
2) $-\frac{\pi}{24}+\frac{\pi k}{4},\ k\in Z$
3) $\frac{\pi}{12}+\frac{\pi k}{2},\ k\in Z$
4) $-\frac{\pi}{12}+\frac{\pi k}{2},\ k\in Z$

(13-16) Լուծել անհավասարումը.

13 $\frac{6x-1}{5}-\frac{x+1}{2}\geq x-1$:

1) $\left(-\infty;-1\right]$
2) $\left(-\infty;-0{,}6\right]$
3) $\left(-\infty;1\right]$
4) $\left[0{,}5;+\infty\right)$

14 $\sqrt{19-5x}\geq\sqrt{17}$:

1) $\left(-\infty;0{,}4\right]$
2) $\left[-5;+\infty\right)$
3) $\left(-\infty;-3\right)$
4) $\left(-\infty;-3\right]$

15 $7^{5-2x}\leq 1$:

1) $\left(-\infty;3\right]$
2) $\left(3;+\infty\right)$
3) $\left[2{,}5;+\infty\right)$
4) $\left(-\infty;2{,}5\right]$

16 $\lg\left(x-2\right)>0$:

1) $\left(3;+\infty\right)$
2) $\left(3;13\right)$
3) $\left(13;+\infty\right)$
4) $(-\infty;13)$

**(17-20) Առաջին ապրանքի գինը 80 դրամ է: Երկրորդ ապրանքի գինը առաջին ապրանքի գնից ավել է 25 %-ով:**

**17** Քանի՞ դրամ արժե երկրորդ ապրանքը:

1) 120
2) 64
3) 96
4) 100

**18** Քանի՞ տոկոսով պետք է պակասեցվի երկրորդ ապրանքի գինը, որպեսզի առաջին և երկրորդ ապրանքների գները հավասարվեն:

1) 20
2) 30
3) 25
4) 10

**19** Քանի՞ դրամ կդառնա երկրորդ ապրանքի գինը, եթե սկզբնական գնի համեմատ նրա գինը երկու անգամ հաջորդաբար բարձրացվի 20 %-ով:

1) 144
2) 120
3) 100
4) 125

**20** Քանի՞ դրամ կլինի առաջին ապրանքի գինը, եթե այն բարձրացվի 25 %-ով, այնուհետև իջեցվի 30 %-ով:

1) 75
2) 80
3) 70
4) 60

**(21-24) Կատարել առաջադրանքները.**

**21** Նշվածներից ո՞րն է թվաբանական պրոգրեսիա.

1) 1; 2; 4
2) 3; 7; 13
3) $\frac{1}{3}; \frac{1}{6}; 0$
4) $\frac{1}{8}; \frac{5}{8}; 1\frac{3}{8}$

**22** Գտնել թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե $a_7 = 28,\ S_7 = 112$:

1) 3
2) 4
3) 6
4) 7

**23** Գտնել $\frac{2}{3};\ 2;\ \ldots$ երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք չեն գերազանցում 162-ը:

1) 5
2) 6
3) 7
4) 8

**24** $(b_n)$ երկրաչափական պրոգրեսիայում $b_4^2 \cdot b_{13} = 8$: Գտնել $b_7$-ը:

1) 4
2) 8
3) 2
4) 16

**(25-28) Տրված է $f(x)=x^4-\frac{1}{3}x^3+6$ ֆունկցիան:**

**25** Գտնել $f$ ֆունկցիայի ածանցյալը:

1) $4x^3-x^2$
2) $4x^4-\frac{1}{3}x^2$
3) $4x-1$
4) $4x^3+x^2$

**26** Գտնել $f$ ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) $\left\{0;\frac{1}{4}\right\}$
2) $\left\{0;\frac{1}{3}\right\}$
3) $0$
4) $\left\{0;\frac{1}{6}\right\}$

**27** Գտնել $f$ ֆունկցիայի աճման միջակայքը:

1) $\left[0;\frac{1}{4}\right]$
2) $\left[\frac{1}{4};+\infty\right)$
3) $\left(0;\frac{1}{4}\right)$
4) $\left[0;\frac{1}{3}\right]$

**28** Գտնել $f$ ֆունկցիայի մեծագույն արժեքը $[1;\,3]$ միջակայքում:

1) 0
2) 78
3) 72
4) 99

**(29-32) Զուգահեռագծի անկյունագիծը հավասար է նրա կողմերից մեկին, մեծ կողմը $4\sqrt{2}$ է, անկյուններից մեկը՝$45^0$:**

**29** Գտնել զուգահեռագծի փոքր կողմի երկարությունը:

1) 4
2) $4\sqrt{2}$
3) 6
4) 2

**30** Գտնել զուգահեռագծի մակերեսը:

1) 20
2) 32
3) $8\sqrt{2}$
4) 16

**31** Գտնել զուգահեռագծի մեծ անկյունագծի երկարությունը:

1) $4\sqrt{2}$
2) 4
3) $4\sqrt{10}$
4) $4\sqrt{5}$

**32** Գտնել զուգահեռագծի փոքր կողմին տարված բարձրության երկարությունը:

1) 4
2) $2\sqrt{2}$
3) 6
4) 2

**(33-36) Գլանի առանցքային հատույթի անկյունագիծը $24\sqrt{2}$ սմ է և նրա ծնորդի հետ կազմում է $45^0$ անկյուն:**

33 Գտնել գլանի հիմքի շառավղի երկարությունը:

1) $6\sqrt{2}$ սմ
2) $12\sqrt{2}$ սմ
3) 12 սմ
4) 24սմ

34 Գտնել գլանի բարձրության երկարությունը:

1) 24 սմ
2) $6\sqrt{14}$ սմ
3) $12\sqrt{2}$ սմ
4) $12\sqrt{14}$ սմ

35 Գտնել գլանի կողմնային մակերևույթի մակերեսը:

1) $144\pi$ սմ$^2$
2) $576\pi$ սմ$^2$
3) $144\sqrt{2}\pi$ սմ$^2$
4) $288\pi$ սմ$^2$

36 Գտնել գլանի ծավալը:

1) $288\sqrt{2}\pi$ դմ$^3$
2) $0{,}864\sqrt{2}\pi$ դմ$^3$
3) $1{,}728\sqrt{2}\pi$ դմ$^3$
4) $3{,}456\pi$ դմ$^3$

**(37-40) Տրված են $ABCD$ քառակուսու $A(-2; 2)$, $B(3; 7)$, $C(8; 2)$ գագաթները:**

**37** Գտնել քառակուսու $BD$ անկյունագծի երկարությունը:

**38** Գտնել քառակուսու անկյունագծերի հատման կետի աբսցիսը:

**39** Գտնել քառակուսու մակերեսը:

**40** Գտնել քառակուսու $A$ և $B$ գագաթներով անցնող ուղղի անկյունային գործակիցը:

**(41-44) Տրված է $a$ պարամետրով $12\sin x+\cos 2x=a$ հավասարումը:**

| 41 | $a$-ի ի՞նչ արժեքի դեպքում $x=\frac{\pi}{2}+2\pi k$ $(k\in Z)$ տեսքի յուրաքանչյուր թիվ կլինի այդ հավասարման արմատ: |
|---|---|

| 42 | Գտնել $a$ պարամետրի ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում հավասարումն արմատ ունի: |
|---|---|

| 43 | Գտնել $a$ պարամետրի ամենամեծ բացասական ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում հավասարումն արմատ չունի: |
|---|---|

| 44 | Գտնել $a$ պարամետրի այն ամբողջ արժեքների քանակը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն արմատ ունի: |
|---|---|

**45** **Տրված են $f(x)=2^x$ և $g(x)=-\frac{3x+1}{5}$ ֆունկցիաները:**

Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1) $f$ ֆունկցիան աճող է:
2) $g$ ֆունկցիան նվազող է:
3) $f(x)=g(x)$ հավասարումն ունի դրական արմատ:
4) $y=f(g(x))$ ֆունկցիան նվազող է:
5) $f(x)=g(x)$ հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
6) $f(x)>g(x)$ անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է $[-1;+\infty)$ միջակայքը:

## Բ մակարդակ

**(46-49)** $A$ **վայրից դեպի** $B$ **վայրն ուղևորվեց 24 կմ/ժ արագությամբ շարժվող հեծանվորդը: 40 րոպե անց** $A$**-ից դուրս եկավ 40 կմ/ժ արագությամբ շարժվող մոտոցիկլավարը, որը հասնելով հեծանվորդին, անմիջապես հետ շրջվեց և** $A$ **վերադարձավ այն պահին, երբ հեծանվորդը հասավ** $B$**:**

46 Քանի՞ րոպեում մոտոցիկլավարը կարող է անցնել հեծանվորդի 60 րոպեում անցած ճանապարհը:

47 Հեծանվորդը քանի՞ րոպեում $A$ վայրից հասավ $B$ վայրը:

48 Քանի՞ կմ է $A$ և $B$ վայրերի հեռավորությունը:

49 Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո մոտոցիկլավարը հասավ հեծանվորդին:

**(50-53) Շրջանագիծն անցնում է $ABC$ եռանկյան $C$ գագաթով, հատում է $AC$ կողմը $D$ կետում, $AB$ կողմը շոշափում $B$ գագաթում: Հայտնի է, որ $AC = 24$, $\angle CBD = 30^0$, $BD = DC$:**

| 50 | Գտնել $ABC$ անկյան աստիճանային չափը:

| 51 | Գտնել $DBA$ անկյան աստիճանային չափը:

| 52 | Գտնել $AD$ հատվածի երկարությունը:

| 53 | Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:

**(54-57) Գտնել արտահայտության արժեքը.**

**54** $10\sin\left(2arctg2\right)$:

**55** $3x_1x_2^2+3x_1^2x_2-x_1x_2$ , որտեղ $x_1$-ը և $x_2$-ը $x^2-8x+5=0$ հավասարման արմատներն են:

**56** $\left(\frac{1}{25}\right)^{\log_{0,2}3-0,5}$:

**57** $tg75^0+tg15^0$:

**(58-61) Կատարել առաջադրանքները.**

**58** $y=-4x+7$ ուղիղը շոշափում է $f(x)=-x^2+2x-2$ ֆունկցիայի գրաֆիկը: Գտնել շոշափման կետի աբսցիսը:

**59** Գտնել $f(x)=4+e^{2x}-2x$ ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

**60** Գտնել $f(x)=\left|\sin\frac{\pi x}{7}\right|$ ֆունկցիայի հիմնական պարբերությունը:

**61** Գտնել $a$-ի ամենափոքր արժեքը, որի դեպքում $f(x)=-x^3+12x^2-ax-1$ ֆունկցիան նվազող է ամբողջ թվային ուղղի վրա:

**(62-63) Սեղանին դրված է հանրագիտարանի 6 հատոր:**

62 Քանի՞ եղանակով կարելի է ընտրել այդ հատորներից երկուսը:

63 Քանի՞ եղանակով է հնարավոր այդ գրքերը դասավորել գրադարակում այնպես, որ 1-ին և 2-րդ հատորները կողք-կողքի չլինեն:

64 **Տրված է $|x+2| \geq ax$ անհավասարումը** ($a$-ն պարամետր է):

Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1) $a=0$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $(-\infty;\ +\infty)$ միջակայքն է:
2) $a=1$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $(-\infty;\ -1]$ միջակայքն է:
3) $a=-1$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $[0;\ +\infty)$ միջակայքն է:
4) Գոյություն ունի $a$-ի միայն երկու ամբողջ արժեք, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունն ամբողջ թվային ուղիղն է:
5) $(-1;\ 0)$ միջակայքի ցանկացած $a$-ի դեպքում անհավասարումը $-2$-ից փոքր լուծում չունի:
6) Ցանկացած $a>9$ դեպքում անհավասարումն դրական լուծում չունի:

65

**$O$ կետից տարված են $OA$, $OM$, $ON$ ճառագայթներն այնպես, որ $\angle MON = 90^0$, $\angle AON = \angle AOM = 60^0$: $A$ կետից $MON$ անկյան կիսորդին տարված է ուղղահայաց հարթություն, որը $OM$ և $ON$ ճառագայթները հատում է համապատասխանաբար $C$ և $B$ կետերում: $H$-ը $BC$-ի միջնակետն է:**

Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1) $OA$ ուղղի և $MON$ հարթության կազմած անկյունը $45^0$ է:
2) $OAB$ եռանկյունը կանոնավոր է:
3) $AH = OH$ :
4) $ABC$-ն կանոնավոր եռանկյուն է:
5) $AOBC$ երկնիստ անկյունը $45^0$ է:
6) $H$-ը $OABC$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնն է: